Օրերուս՝ ամէն սրբազան աշտարակէ հնչած ողբաձայն պզինձներն՝ հաւատացելոց աչքերը վերցընելով յերկինք և իջեցընելով յերկիր, և իրենց ներկայ կենաց վերջէն գալի երկու բնակարանները յանդիման բերելով, զգերեզման և զհանդերձեալ աշխարհ, և հոն իրենցմէ առաջ հասած ծանօթները, մեր դիմաց ալ կը բերեն մեր ետքի և նոր կնքած քնարանը, յորում՝ իբր երկու ամիս յառաջ հանգուցինք հոգեհարազատ եղբայր մը, որոյ կենաց սեփականագոյն յիշատակն և ժառանգութիւնն ալ՝ էր, արժանի իւր կոչմանն, լաւութիւն և ազնուութիւն. որով և իրմէ զրկելոցս ցաւն՝ թէ և ազնիւ, այլ ազգողագոյն։ Արդէն մեր կրից հաղորդ եղան՝ որք մօտանց ճանչցեր էին մեր հանգուցեալ եղբայրը, Հ. ՀԱՄԱՋԱՊ Վ. ԹԷՐՃԻՄԱՆ, որ 'ի 10 սեպտեմբերի տարւոյս՝ կնքեց, ըստ աշխարհի տարաժամ մնչեալ 39ամեայ տարիքը, և ըստ երկնից կանուխ հասունացեալ կեանքը։ Եւ եթէ այսօր գրութեամբ և հրատարակութեամբ մը նորոգեմք մեր չըմնացած կսկիծը, հեռաւորաց ալ հաղորդելով, ոչ մեզի երկրաւոր մխիթարութիւն մը և ոչ հանգուցելոյն նոյնպիսի պատիւ մը ճարելու համար է, այլ հարկ մ'արդարութեան առ յիշատակ արդարոյն և սիրելւոյն, և առ սրտահաճութիւն առաքինասէր և իրաւախոհ ազգայնոց. որք թերևս քան զայլ ժամանակս՝ հիմա լաւագոյն ճանչնան զյարգ և զպէտք ընտիր եկեղեցականի և մանկանց դաստիարակի. և որոց ոմանց որդիքն ալ՝ հանգուցելոյս ինամակալութեամբ երկար կամ կարճ ատեն կրթուած են, և ոմանք իրեն հոգեսուն եղբայրակիցք ալ եղած։

Կրօնից նուիրեալ մանկանց դաստիարակութիւնն, 'ի վանս մեր, եղաւ գլխաւոր և արդիւնաւոր գործ և վաստակ հանգուցեալս, թեր և արագ հասուցիչ 'ի վախճան երկար փափագելի կենացն։ Եթէ աշխարհային կարճատես պերճախնդիր աչք չեն շլանար հեռուէն այսպիսի կենաց լուսով, ստոյգ իմաստասէր և ազգասէր մը չկրնար չվերադասել զայն՝ քան շատ մը ուրիշ արդեամբք փայլեալ կեանքեր. մանաւանդ եթէ բաղդաւոր ըլլար, մեզի պէս, մօտանց ճանչնալու այն ինքնանուէր, հասարակասէր, արդարասէր անձին ձիրքերը, որք բարուցը բնական քաղցրութեան և հեզութեան հետ խառնուած՝ բոլոր կենացը վրայ ամէնուն ախորժելի և պատուելի շնորհք մը հիւսած էին. զոր և աւելի զգալի կ'ընէին իր հանդարտ, կշռած, հասարակաց օգտաբեր թելադրութիւնքն և անշահասէր կենցաղավարութիւնն, որով և օտարաց սիրելի և մեծարելի էր։

Ուրքան և ցաւած և վշտացած է մեր Մխիթարեան միաբանութիւնս այսպիսի բազմայոյս անձէն զրկմանը վրայ, այնքան և համարձակի մխիթարիլ՝ իրեն զաւակ, օժանդակ և հիմն բարեխօս ունենալուն, ոչ միայն յազգի՝ այլ և յաշխարհի հազուագիւտ մանրակենցաղ, քաղցրաբարոյ, խորհրդական, հոգեռանդն, ընկերասէր անձանց մէկն, և յուսայ՝ քանքարաշահ աղնիւ ծառայ մը ընծայած ըլլալ ամենախնամ Արարչին, որոյ լուրջ վճիռը՝ խոնարհ արտասուք կը կարդայ և կը համբուրէ նաև 'ի վերայ լռին և խորին հանգստարանի իւր հոգեխառն սիրելւոյն և քաղցրայուշիկ ՀՕՐ ՀԱՄԱՋԱՊԱՅ։